գեցաւ, մենք կուի մէջ ենք դեռ թիւրքի, այո՛, միայն թիւրքի հետ, որ անվերջ դաւեր կը նիւթէ մեր դէմ սահմանէն այն կողմ և այս կողմ։ Նա նոր աշխատանք է սկսել՝ մահմեդական գաղթականներ կը բնակեցնէ Ցանկահայաստանի մէջ, որպէսզի ասով ցոյց տայ, թէ այնտեղ հայ գոյութիւն չունի, իսկ մեր ժողովուրդը՝ գաղթական, սոված ու մերկ՝ դեռ կը թափառի մտրելով՝ ո՞ւր է արդարութիւնը։ Մերն է այն հողը և հայ կամքը կուզէ այն միացած տեսնել այս երկրին։ Մերն է Ցանկահայաստանը։ Այդ պիտի գիտնան ամենքը և եթէ պէտք լինի վերադառնալ հին կուին, մենք նորից նոր կը հաւաքենք մեր ուժերն ու կուի կելլենք մեր արդար իրաւունքը պաշտպանելու համար (բուռն ծափեր)։

Կէս միլիոնէն աւելի ժողովուրդ ունինք, որ կապրի սահմանէն դուրս այդ սահմաններուն համար, մեր գաղթականութիւնը տարերային ուժով կը ձգտէ դէպի իր հողը և հապա կարելի կրլլայ կասեցնել անոր հոսանքը, և այդ ոչ միայն այստեղ, դուրսը՝ Ամերիկա, Եւրոպա բնակող հայերն անհամբեր կը ապասեն տեսնել իրենց հայրենիքն ազատ՝ դալու, ապրելու, վերաշինելու և ստեղծագործելու։

Պէտք է լուծի այդ անխուսափելի բնական դատը և պէտք է ստեղծի Միացեալ և Անկախ Հայաստանը։

Ս. Վրացեան. — Ընկեր պատգամաւորներ, այն, ինչ որ կատարւում է այսօր, արդիւնք է մի քաղաքականութեան, որ շատ վաղուց է սկսած և որ հայկական հարց անուն է կրում։

Հայկական հարցը նոյնքան հին է, որքան հին է հայ ժողովրդի ձգտումը քաղաքական ազատութեան։ Սկզբում նա գերազանցապէս առարկայ էր արտաքին քաղաքականութեան. հայկական ազատագրութեան ռահվիրաները երազում էին Հայաստանի ազատութիւնը տեսնել դրսի ուժերի միջոցով։ Մէկը փրկութիւն էր հայցում հիւսիսից, միւսը՝ արևմուտքից։ Մարդասիրութիւնն ու գթասրտութիւնն էր միայն այն գէնքը, որով կարծւում էր ստանալ ազատութիւն։ Բերլինի վեհաժողովը իր հռչակաւոր 61րդ յօդւածով եկաւ վերջնականապէս խորտակելու այն երազական յոյսերը, որ հայ քաղաքական մտքի դեկավարները տածում էին դէպի «մարդասէր ու քաղաքակիրթ Եւրոպան»։ Այդ հիասթափութեան ամենապերճախօս արտայայտիչը հանդիսացաւ հայ առաջին յեղափոխականը՝ Խրիմեան Հայրիկը, «երկաթէ չերեփի» գաղափարախօսը։

Երկրորդ շրջանը հայկական հարցի — հայ յեղափոխական շարժումն է։ Հիասթափւած «խարդախ» ու «շահամոլ» Եւրոպայից, հայ քաղաքական միտքը գլխաւոր ուշադրութիւնը դարձնում է հայ ժողովրդի ներքին կազմակերպութեան ու դիմադրական ոգու բարձրացման վրա, այն համոզումով, որ միայն յեղափոխական ճանապարհով է հնարաւոր ձեռք բերել ազատութիւն. դրսի ուժերը օգնութեան կը գան այն ժամանակ միայն, երբ ժողովուրդն ինքը իր մարտական ընդվզումներով հարկադրէ նրանց միջամտելու։ Առաջ, ներքին կազմակերպութիւն, սեփական ուժի ամրացում ու յեղափոխական գործունէութիւն և յետոյ միայն արտաքին քաղաքականութիւն — ահա էութիւնը հայ յեղափոխական շարժման, որի գաղափարական ձևակերպողն ու գործնական դեկավարը եղաւ Հ. Յ. Դաշնակցութիւնը։

Հայկական հարցի պատմութիւնը վերջին երեսուն տարիների ընթացքում — դա խկապէս Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւնն է։ Դաշնակցութիւնը հայ քաղաքական դատի ներկայացուցիչը հանդիսացաւ գերազանցապէս։ Մի կողմից նա դեկավարեց հայ ժողովրդի ինքնապաշտպանութեան գործը՝ պայքար մղելով ոչ միայն հայ ժողովրդի ֆիզիքական գոյութեան դէմ հանւած ապառնալիքների հետ, այլև ապահովելով նրա հոգևոր-կուլ-